

ռազմական գործողությունները, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան արևմտահայության համար:

Այն փաստը, որ Կայսերական Գերմանիան դրական մոտեցում ցուցաբերեց հայարնակ նահանգ-ներում բարեփոխումների իրականացման նկատմամբ, ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նման դիրքորոշումը նախապատերազմյան ժամանակաշրջանում պայմանավորված էր մի քանի գոծոններով, որոնցից առաջնայինը արևմտահայության շրջանում ուստական ավանդական ազդեցության թուլացումն ու գերմանական կրղմությունման ընդլայնումն էր, իայաբնակ տարածքներում թուրքական տիրապետության ամրապնդումը և Արևմտյան Հայաստանում գերմանական տնտեսական ու քաղաքական ազդեցության մեծացումը: Սակայն պատերազմի նախօրյակին ակնհայտ էր, որ արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակում է մնալ ուստամետ, իսկ Հայկական հարցը շահարկվում էր մեծ տերությունների կողմից: Այդ իսկ պատճառով համաշխարհային պատերազմի նախօրենին գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ առավել քաջատեղյակ էին դրսւում ստացավ, որի մասին է վկայում Կ. Պոլսում գերմանական դնապան Վանգենհայմի՝ դեռևս պատերազմից առաջ հայտնած այն տեսակետը, որ հայերը պետք է ընդունեն իսլամ, միայն այդ դեպքում նրանց հանգիստ կրթողնեն<sup>1</sup>:

Այսպիսով գերմանացի քարձրաստիճան պաշտոնյաների այս և նամանատիպ հայտարարությունները վկայում են, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրենին երիտթուրքները մշակել-պատրաստել էին արևմտահայության տեղահանման հրեշտակոր ծրագիրը, որին քաջատեղյակ էին գերմանացիները, որոնք հետագայում ոչ միայն չփորձնեցին խոշլնդրուն, այլև մասամբ գործուն մասնակցություն ունեցան այդ ոճազործության կազմակերպմանն ու իրականացմանը:

Արտասահմանյան, ինչպես նաև խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում գերմանական իշխանությունների վերաբերմունքը պանթուրքիստական ծրագրերի և մասնավորապես Հայոց ցեղասպանության վերաբերյալ այնպես է ներկայացվում, թենի իբր գերմանացիներն են հղացել, մշակել և նուանդուն կերպով աջակցել դրա իրականացմանը: Նման պնդումները որևէ փաստարկված հիմնավորումներ չունեն և լոկ անհիմն ենթադրություններ են, քանի որ հայերի տեղահանության ու կոտորածների ծրագրին երիտթուրքները հետամուտ էին դեռևս 1911 թ., երբ Սալոնիկում կայացած երիտթուրքների խորհրդակցության ժամանակ որոշում ընդունվեց հայության բնաշնչման վերաբերյալ, և միայն նպաստավոր իրադրության էին սպասում, այն իրականցնելու համար: Այլ հարց է, որ Կայսերական Գերմանիան՝ որպես Թուրքիայի գլխավոր դաշնակից, աշխարհամարտում ամեն գնով հաղթելու և Մերձավոր Արևմտյան իր շահերից ենթելով, ինչպես նաև, քաջատեղյակ լինելով պանթուրքական ծրագրերին, ոչինչ չարեց դրանց կանխման համար, անգամ որոշ դեպքերում գործնական աջակցություն ցուցաբերենց այդ ծրագրերի իրականացմանը: Գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են, որ նախքան Կայսերական Գերմանիայի հետ Թուրքիայի դաշնակցելը, հայերի տեղահանության և կոտորածների վերաբերյալ երիտթուրքներն արդեն որոշում էին ընդունել: Օսմանյան Թուրքիայում ԱՄՄ-ի դեսպան Մորգենթաուն իր հուշերում գրել է, որ թուրք քարձրաստիճան պաշտոնյաներից մեկն իրեն ասել էր, թենի հայերին տեղահանելու հարցի հետ կապված երիտթուրքները մի քանի զաղտնի խորհրդակցություններ են ունեցել և դեռևս 1914 թ. գարնանը որոշվել է իրականացնել այդ ծրագիրը<sup>2</sup>:

## Տեղեկություններ հեղինակի մասին

**Կարինե Հռվենիյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրոս**

E-mail: Karine.hovsepyan.1985@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորեն լսմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ. Ավանեսյանը:

ՀՏՀ 32.019.5(479.243)

Քաղաքագիտություն

## ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

<sup>1</sup> Տե՛ս Ստեփանյան Հ. Գերմանական հայությունների մասին պատմություն, Երևան, 1991 թ., էջ 63

<sup>2</sup> Տե՛ս Morgenthau H., The Tragedy of Armenia, The Murderous Tyranny of the Turks, London, 1917, էջ 6:

## ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

### Աշու ԴՈՒՅՑԱՆ

**Բանալի բառեր՝** պետականություն, իրավունք, պետական շինարարություն, պետականա-մնալություն, պատմական նախադրյալ, քաղաքական նախադրյալ, սոորագրահավաք, կուսակցություն, վերակառուցում, իրականություն, շարժում

**Ключевые слова** - государственность, право, государственное строительство, приверженность государственному строю, историческая предпосылка, политическая предпосылка, петиция, партия, перестройка, реальность, движение

**Key words:** statehood, law, state-building, statehood commitment, historical prerequisites, political prerequisites, petition, party, reconstruction, reality, movement

**Ա. Գուլյան**

#### Исторические и политические предпосылки развития системы государственного строительства НКР

В статье представлены исторические и политические предпосылки, имевшие важное значение в период Карабахского движения и в процессе формирования системы государственного строительства НКР. Обосновывается мнение, что данные предпосылки являются не отдельными фактами, а проявлением исторически сформировавшихся национального уклада и ментальности, которые обусловили и сопровождали движение и весь последующий процесс государственного строительства.

**A. Ghoulyan**

#### Historical and Political Background of the Development of NKR state Building System

The article presents historical and political prerequisites which played an important role both during the Karabakh movement and further development of the state-building system of NKR. The main idea is that these prerequisites are not just separate facts but the Movement itself and the following state-building process are based on and guided by historically formed national Genesis and mentality.

Հոդվածում ներկայացվում են պատմական եւ քաղաքական այն նախադրյալները, որոնք կարեւոր նշանակություն են ունեցել Ղարաբաղյան շարժման ծավալման եւ ԼՂՀ պետական շինարարության համակարգի ձեւավորման գործընթացում: Հիմնավորվում է այն տեսակետը, որ այդ նախադրյալներն ոչ թե առանձին փաստեր, այլ Շարժումն ու դրան հաջորդած պետականաշինարարության գործընթացը պայմանավորող եւ ուղղորդող ազգային կենսակերպի ու վարքի պատմականորեն ձեւավորված որակներ են:

Յուրաքանչյուր պետության համար պետական շինարարության գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեն այն գործոնները, որոնք տվյալ ժողովորդը գտնում է մի տեսակ պատրաստի վիճակում՝ որպես նախընթաց պատմության մեջ ձևավորված առարկայական կամ հոգևոր իրողություններ:

Ղարաբաղյան շարժման ծավալման և ԼՂՀ պետական շինարարության համակարգի ձևավորման մեջ նման կարևոր դեր են ունեցել պատմական<sup>1</sup> և քաղաքական նախադրյալները:

428 թվականից՝ հայկական միասնական պետականության անկումից հետո, Արցախի ողջ պատմությունը հայկական պետական անկախության վերականգնման համար անընդհատ մղված պայքարի պատմություն է: Արդեն նոյն հինգերորդ դարի վերջին Առաջահիմների իշխանական տան գլխավորությամբ մղված պայքարը պատճեն նրանով, որ Պարսկաստանը ճանաչեց Առաջահիմկ իշխանական տան ժառանգական իրավունքները և վաչագանին, որն իր կողմից շինարարական, մշակութային ու օրինաստների լայնածավալ իրազերումների համար ստացավ Բարեպաշտ մականունը, ճանաչեց

<sup>1</sup> ԼՂՀ-ում պետականաշինության պատմական նախադրյալների մասին խոսելիս մասնագետները հաճախ նախընթառում են օգտագործել պետականության ակունքները հասկացությունը, ինչպես դա արել են Կ. Հակրամանյանը ու Ա. Ա. Ղազիյանը «Հեռնային Ղարաբաղի հանրապետություն. Պետականության ակունքները» (Երևան. 2008): Քաղաքական տերստերում, մեր կարծիքով, նախընտրելի է նախադրյալներ եզրույթը:

Հայոց Արևելից կողմանց (Արցախի և Ուսիրի) իշխանապետության թագավոր՝ նրան տալով նաև աղ-վանական զնդեմքին կառավարելու իրավունքը: Թագավորության մայրաքաղաքը, ինչպես հաստատում են պատմական աղբյուրները, Պարտավն էր: Հայոց Արևելքում պետական ավանդությունները ոչ միայն պահպանվեցին, այլև նոր որակներ ձևոր բերեցին: Դրանք Պարսկաստանից կալվածության պայ-մաններում ներքին անկախության ամրապնդմանն ու պետական հաստատությունների նույնականությունների պահպանմանը միտված պետականության գործառությունների որոշակի փոխակերպումներ էին: Հայտնի է, որ հենց Վաչագան Բարեպաշտի օրոք է ընդունվել հայոց առաջին Սահմանադրու-թյունը՝ «Սահմանադրություն կանոնական» անվամբ: Դա քրիստոնեական գաղափարախոսական ու մշակութային հիմքի վրա երկրի ներքին իրավաբարական հարաբերությունների կարգավորման անհասարարության վեհական լուսավորության մեջ: Բաղարական տեսակետից առանձին հե-տաքրքրություն է ներկայացնում Սահմանադրության ընդունման՝ Վաչագանի կողմից ընտրված կար-գը: Նախապատրաստական փուլում Բարեպաշտը հետևել է հայոց մեջ ավանդաբար ընդունված և քաղաքական-մշակութային ազգային բացառիկ արժեք ներկայացնող աշխարհաժողովների պրակտի-կային, որը թույլ էր տալիս համազգային կարևորության հարցերի լուծմանը հասնել ազգային համա-ձայնության հիմքի վրա: Աշխարհաժողովը, որպես ազգային իրավական ու քաղաքական հաստա-տություն, ոչ միայն Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի մշակութային պատմության բացառիկ երևույթներից է: Ազգային կարևորագույն վճիռների ընդունմանը մասնակից դարձնելով նաև երկրի հոգևոր ու աշխարհիկ տերերին, տարբեր խավերի երևանիներին ու պատասխանատուներին՝ այն ըստ էռության կատարում էր ժողովրդավարության յուրօրինակ հաստատության, համազգային կոնսենսու-սի՝ պատմականորեն ձևավորված տեսանողության դեր: Ազգային միասնական պետության բացակա-յության պայմաններում մեր հարատևության գաղտնիքներից մեկի բացատրությունը կապված է այդ հաստատության հետ: Ազգային կարևոր վճիռների ընդունման այդ կարգը, ինչպես նշվեց, Վաչագա-նից շատ ու շատ առաջ կար և ուներ ավանդական հաստատության ձև: Բարեպաշտը փաստորեն հարազատ է մնացել ազգային քաղաքական այդ ավանդույթին և խորացրել այն «Սահմադրություն կանոնական» ընդունման ընթացքում:

«Սահմադրություն կանոնականը» խոր հետք է թողել ոչ միայն Արցախի, այլև ողջ Հայաստանի իրավական կյանքի վրա՝ պայմանավորելով իրավագիտակցության, օրինապաշտության ու պետա-կանամետության դրսերումներով հանդիս նկող իրավական մշակույթի աղբյուրներից մեկը:

Բնակ պատահական չէ, որ հենց Հայոց Արևելքն է դարձել օրինաստներության հասարակական ավանդույթների կրողը հետագա դարերում: Նկատի ունենք Մլիթար Գոշի «Դատաստանագիրը», որը պատմական փոփոխված միջավայրում «Սահմանադրություն կանոնականի» պես ձեռք բերեց հա-մազգային նշանակություն: Հատկանշական է, որ «Դատաստանագիրը» գրվել է, ինչպես մեր օրե-րում կասեին, պետական պատվիրով: Հայոց ազգային օրենքների առաջին ժողովածուն Գոշին պատ-վիրել, հորդորել ու հովանավորել են զրել Խաչենի իշխանաց Վալսթանգը և նրա տիկինը՝ Արզու Խարթունը: Վալսթանգն այս դեպքում առաջնորդվել է այն նույն գաղափարներով, որոնցով իիզնորդ դարում առաջնորդվել է Վաչագան Բարեպաշտը: Դրանք պետականության, օրինականության, հա-սարակական հարաբերությունների իրավական կարգավորման՝ Գոշի կողմից մշակված կանոննե-րի առանձնահատկությունն այն էր, որ այն կիրառելի դարձավ ոչ միայն պետական հաստատության առկայության, այլև նրա բացակայության պայմաններում՝ գաղթօջախներում համայնքային կյանքը հայեցի ձևով կանոնակարգելու համար: Հայտնի է, որ «Դատաստանագիրին» պարտադիր օրենքի ուժ է վերագրվել XII դարում Կիլիկյան Հայաստանում, իսկ հետագայում նաև՝ հայկական տարբեր գա-

դութներում՝ Լեհաստանում, Ռուսաստանում (Կոնկրետ՝ Ղրիմում և Աստրախանում), Վրաստանում, Հնդկաստանում, Սուրբանում եւ այլուր:

Վերջապես պակաս կարևոր չէ այն, որ Գոշի գործունեությունը պարզապես չի եղել անհատական նախաձեռնություն: Մնծ իրավագետը 1184 թվականին «Դատաստանագիրը» ստեղծել է դարերի ընթացքում ձևավորված հայկական սովորութային իրավունքի հիման վրա, որի շարունակական զարգացման համար Արցախն ունեցել է առավել նպաստավոր պայմաններ: Փաստը, որ մեր կողմից վերլուծվող հարցի տեսակներից այստեղ կարևոր է ընդգծել, այն է, որ Հայոց Արևելից կողմում՝ Արցախ-Ուտիք աշխարհում, «Ժողովրդական իրավագիտակցության», հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հարաբերությունների իրավական կարգավորվածության պատմականորեն խոր արմատներ նետած այնպիսի ավանդույթներ են եղել, որոնք որոշակի ազգային մշակույթի ու վարքի ուժ ու արժեք են ունեցել: Գոշը ոչ միան ստեղծագործել է, այլև Գետիկում հիմնել է դպրոց՝ իր ժամանակի իրավագիտության հիմունքները նոր սերնդին փոխանցնելու համար: Ուշ միջնադարում մեկը մյուսին հաջորդած առաջ ասպատակությունները ի զորու չեն եղել ազգային խառնվածքի ու պահանջույթի բնույթ ընդունած այդ մշակույթի ոչնչացմանը: Ավերվել են եկեղեցիներն ու բնրդերը, զյուղներն ու քաղաքները, սակայն պետականամետության ու օրինապատության հոգևոր բնրդերը մնացել են անառիկ: Պատահական չէ, որ ազգային խառնվածքի ու գիտակցության այդ որակները հետագա դարերում վճռական դերակատարություն են ունեցել Խաչենի իշխանության և Արցախի մելիքությունների՝ միջնադարյան պետականության այդ ձևերին ներքին քաղաքական կյանքում և նաև գոյատևության համար նրանց կողմից մղված պայքարում: Սակայն ճիշտ չէր լինի իրավական գիտակցության ու նրա գործնական դրսւորումները հետագա դարերում սահմանափակել Արցախով: Ազգային այդ մշակույթը ուղղվեց է ն հային ամենուր՝ թե՛ հայրենիքում, թե՛ զաղթօջախներում: Դրա վկայությունը հետագոր հնդկաստանում ստեղծված «Որոգայթ փառացն է», որն այդ դարաշրջանում պատմության կողմից հայ ժողովրդին նետած մարտահրավերների պատասխանն էր իրավունքի, օրինաստեղծության ու պետականության վերածնության նախագծի լեզվով: Հայ ժողովրդի տարբեր հատվածները՝ բնօրբանում ու գաղթօջախներում, հավատարիմ են մնացել ազգային կյանքի իրավական կազմակերպման, պետականամետության բարձր գաղափարներին, և դրանք չեն կարող հասարակական կյանքում իրենց դրսւորումները չունենալ: Արցախի պարագայում այդ դրսւորումներն ունեցել են առանձնահատկություններ, որոնք դնուս կարող են լուրջ ուսումնասիրության:

Կա մի հանգամանք, որը, զավոր, դնուս համարժեք ուշադրության չի արժանացել մեր քաղաքագետների կողմից (դրան հպանացիկ են անդրադարձել նաև պատմագետները): Խորըն Արցախում ավատատիրության բնույթի մասին է: Լայնորեն հայտնի է, որ Հայաստանը շրջանցել է ստրկատիրության այն հասարակական կացութածելը, որը պատմաբաններին հայտնի է Ասիայի ու Եվրոպայի պատմությունից: Սակայն պարզվում է, որ միջնադարյան ավատատիրությունն Արցախում ունեցել է մշակութային մի առանձնահատկություն, որը բացատրություն է տալիս շատ ու շատ, առաջին հայացքից դժվար հասկանալի, պատմական անցքերից: Գոյատևության համար օտար նվաճողների՝ կայսերական պետությունների դեմք ըստ էռության ամենօրյա պայքար մղող Հայոց Արևելից կողմանց անկալու ու կիսանկալու պետականություններում ավատատերը և զյուղացին բնավ այն հարաբերությունների մեջ չեն, ինչպիսիք, օրինակ, կային շահական Պարսկաստանում: Հայ իշխանը կամ մելիքը քաջատեղյակ պետք է լիներ վարչականորեն իր հովանու տակ գտնվող զյուղացին բնավ այն հարաբերությունների մեջ չեն, ինչպիսիք, օրինակ, կային շահական Պարսկաստանում: Հայ իշխանը կամ մելիքը քաջատեղյակ պետք է լիներ վարչականորեն իր հովանու տակ գտնվող զյուղացին համայնքների մասին, իսկ այդ զյուղների նրենելիներին պիտի ճանաչեն (և ճանաչում էին) անձամբ ու անվանադիր: Դա թույլ էին տալիս մելիքության կամ իշխանության տարածքի ու բնակչության չափները: Բայց այդ իմացությունը գալիս էր ոչ միայն մելիքությունների (իշխանությունների) տարածական համեստ չափներից: Կար խնդրի շատ ավելի կարևոր կողմից: Արցախցի զյուղացին արևելյան կամ նվաճողական տիպի ճորտ չէր: Նա իր հորի, իր մելիքության սահմանների ամենօրյա պաշտպանն էր: Արցախցի իշխանը կամ մելիքը իր իշխանությանը ենթակա զյուղացու մեջ գուցն և ամենից առաջ զինվոր էր տեսնում, իսկ զյու-

դացին իր իշխանի մեջ՝ իր քաղաքական դեկավարին ու զինվորական հրամանատարին<sup>1</sup>: Սա «ավատատեր-գյուղացի» տնտեսական հարաբերության վրա խոր հետք թռողած իրողություն էր: Մելիքության զինվորական տարիքի հասած գյուղացիները ընդամենը մեկ-երկու օրվա (կամ նույնիսկ մեկ զիշերվա) ընթացքում կարող էին դառնալ կանոնավոր գորագուն՝ որին ճակատամարտ էր առաջնորդում ինքը՝ մելիքը: Գյուղացու և իշխանի հարաբերության տնտեսական քաղաքիչը Արցախում բոլորվին այլ բնույթ ու որակ ուներ, քան Արևելքում կամ Եվրոպայում:

Արցախի դեպքում մեր կարծիքով տնտեսականի տեղը այդ հարաբերություններում ավելի համեստ էր: Այն հարստացված էր անձնային, մարդկային, հոգեբանական երանգներով, որոնք փոխում էին այդ հարաբերության իրավական ու լայն իմաստով հասարակական-մշակութային իմաստն ու արժեքը<sup>2</sup>: Արցախի պատմությունը այս փաստը հաստատող բազմաթիվ օրինակներ է տրամադրում<sup>3</sup>:

Այսպիսով Ղարաբաղյան շարժման նույնական դրա հիմքի ու շարունակության վրա Արցախում անկախ պետականության կերտման պատմական նախադրյալներն ամենից առաջ ոչ թե առանձին փաստեր, այլ ազգային կենսակենրափի ու վարդի պատմականորեն ձևավորված այնպիսի որակներ են, որոնք պայմանավորել ու նաև որոշակի իմաստով ուղղորդել են Շարժումն ու դրան հաջորդած պետական շինարարության գործընթացը, որի վրա էական ազդեցություն են ունեցել նաև քաղաքական նախադրյալները:

Խորհրդային տարիներին դիմումների, զանգվածային ստորագրահավաքների, նամակ-խնդրագրերի ձևով թե՛ Խորհրդային Հայաստանից, թե՛ ԼՂԻՄ-ից պարբերաբար ազդակներ են ուղարկվել Կենտրոն՝ պատմական արդարությունը վերականգնելու և Լեռնային Ղարաբաղը Մայր Հայաստանին վերադարձնելու առաջարկություններով: Հարցը իր դրական լուծմանը մոտ է եղել 1967-ին, երբ Մոսկվան հակված էր շտկելու 20-ականներին թույլ տրված սխալը: Կուսակցության ԼՂԻՄ մարզկոմը (մարզկոմի առաջին քարտուղարը այդ ժամանակ Գ. Մելքոնյանն էր) արդեն իսկ հրահանգ էր ստացել մարզի բնակչությանը նախապատրաստել քաղաքական այդ ակտին: Բայց Աղբբեջանական կողմի և հատկապես Աղբբեջանի կոմիտեի առաջին քարտուղար Ալունդովի ակտիվ գործունեությամբ լսնդրի կարգավորման այդ փորձը ևս ճախտդիմ է: Դրանում, ինչպես հաճախ է նշվում, որոշակի դերակատարություն է ունեցել այն ժամանակ գաղափարախոսության գծով ԽՄԿԿ կենտրոնի քարտուղար Մ. Սուլովը: Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն աղբբեջանական կողմի, Խորհրդային Հայաստանի առաջին դեմքները անգործության հասնող գործափորություն են ցուցաբերել:

Նման հիմնախնդիրների լուծման համար ԽՍՀՄ-ում քաղաքական իրադրությունը փոխվել էր այն քանից հետո, երբ կուսակցության դեկը իր ձեռքը վերցրած Մ. Գորբաչովի նախաձեռնությամբ հոչակվեցին արագացման, վերակառուցման ու հրապարականության քաղաքական ուղղությունը: Ժողովրդավարության, ազգամիջյան հարաբերությունների բոլոր այն հիմնախնդիրները, որոնք մինչ այդ գտնվում էին կուսակցական փակի տակ, դարձան բաց քննարկումների թեմաներ այն ձևաչափներում, որ թույլ էր տալիս տիրապեսող գաղափարախոսությունը: Այս կամ այն հարցի վերանայման (լսուք ոչ միայն

<sup>1</sup> Թեմային անդրադարձել է Կիմ Ղահրամանյանը «Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր» /Երևան, 2013/ աշխատության «Արցախ աշխարհի ուժի աղբյուրը» գլխում:

<sup>2</sup> Այս իրողությունը նկատվել ու գնահատվել է նաև օտարազգի մասնագետների կողմից: 19-րդ դարի երկրորդ կեսին, օրինակ, նրանք արձանագրել են այն փաստը, որ Օսմանյան կայության անկախ պետականության հավակնությունը ժողովուրդներից հայերն են եղել ամենից պատրաստը, առաջին հերթին իրենց ներքին ազգային կազմակերպման իրավաբարպական հասունության իմաստով: Եվ դա թուրքական վայրենի տիրապետության դարերից հետո: Նոյնը նկատել է ֆրանսիացի հայագետ է. Դյուլորիեն՝ ընդգծելով, որ «հայերն ունեցել են մի յուրօրինակ ներքին կազմակերպվածություն, որը նրանց ներշնչել է ապրել, գոյատևել երկար»:

<sup>3</sup> Այս իրողությունը հաստատող բնորոշ փաստերից մեկը երկրամասի համար ծանրագույն 1918 թվականի հոկեմբերի 18-ին Մսմնայի մոտ տեղի ունեցած ճակատամարտն էր (մանրամասները նկարագրված են Հ. Արրահամյանի «Արցախյան գրյամարտ» (Երևան, 1991) գրքում: Բնշ խոր՝ դարավերջին՝ Ղարաբաղյան ազատամարտի տարիներին, ազգային կերպի այդ որակները ստացան փառակեղ դրսնորումներ:

ազգամիջյան թեմաների մասին է) համար, եթե նոյնիսկ դա վերաբերում էր անցյալում հենց կոմունիստների կողմից թույլ տրված դաժան բռնույթուններին, ընդունված էր խոսն մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսության լեզվով և դրանք համարել ոչ թե գիտակցված քաղաքականության, այլ գավագին վրիպումների, մարքսիզմ-լենինիզմից շեղվելու հետևանքը: Այդ ոգով ու ոճով են գրված վերակառուցման ու հրապարակայնության նոր քաղաքական ուղղության անցնելու անհրաժեշտության, տնտեսության վերակառուցման, հասարակական ու ազգային հարաբերությունների նորացման մասին կուսակցական այն որոշումներն ու բանաձևերը, որոնք ընդունվեցին 1985թ. ԽՄԿԿ կենտկոմի ապրիլյան հայտնի պլենումից հետո: Այսօր այդ փաստաթղթերը պետք է կարդալ ու հասկանա՝ նկատի ունենալով քաղաքական ու գաղափարախոսական առանձնահատուկ այն միջավայրը, որում դրանք ստեղծվել են:

Ազգային հարցերում թույլ տրված սխալների շտկման լինդիրը նույնպես հայտնվել էր թույլատրենի քննարկումների ձևաչափերում, և արցախահայությունը Մոսկվայից որոշակի ազդակներ էր ստանում այդ մասին: Դրանց մեջ ամենից ազբեցիկը հայտնի տնտեսագետ, Գորբաչովի խորհրդական Աքն Աղանքելյանի՝ 1987 թվականի նոյնմբերին Փարիզում Ֆրանսիայի հայկական ինստիտուտի և Հայ վետերանների ասոցիացիայի՝ նրա պատվին կազմակերպած ընդունելության ժամանակ քարձրածայնած և ֆրանսիական կոմունիստների «Յումանիտե» թերթում տպագրված դարաբաշխ լինդիրի լուծման մասին «նոր միտքն էր»: Առաջին անգամ նման կարգի խորհրդային (ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի խորհրդական) գիտնականը, արևմտյան մամուլում անդրադառնալով Նախշանանի և Լեռնային Ղարաբաղի հարցերին, դնում էր Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու տնտեսական ու քաղաքական նպատակահարմարության հարցը՝ հայտարարելով, թե ինքն արդեն իսկ «համապատասխան առաջարկություններ է մտցրել»<sup>1</sup>: Թե՛ Խորհրդային Հայաստանում, թե՛ Սփյուռքում, թե՛ Արցախում պնտության ու կուսակցության առաջնորդների վստահությունն ու համակրանքը վայելող գիտնականի այդ հայտարարությունը ընդունեցին որպես հենց կենտրոնի կողմից թույլատրված հայտարարություն<sup>2</sup>: Դա ընկալվեց որպես ԽՄԿԿ-ում քաղաքական իրադրության «վերևներից եկող» քարենապատ փոփոխության ազդանշան, փոփոխություն, որն արտոնում է հարցի կարգավորմանը մասնակից դարձնել նաև «ներքևներին»:

Այսպիսով, Շարժման գլխավոր քաղաքական նախադրյալներից մեկը ԽՄԿԿ-ում հրչակված վերակառուցման և հրապարակայնության նոր քաղաքական ուղղություն էր, որի հետ Մոսկվա նամակներ ու հանրագրեր ուղարկած արցախահայությունը «իրատեսական հոլյսեր» սկսեց տածել: Վերջին դատողության հետ կապված է քաղաքական քնույթի մյուս հանգամանքը: Դա այն է, որ Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի կարգավիրման, Մայր Հայաստանի հետ նրա վերամիավորման դիմումները Արցախից (նաև Խորհրդային Հայաստանից) հազեագրվում էին քացառապես Մոսկվային<sup>3</sup>: Ոչ մի հանրագիր ու դիմում տասնյակ տարիների ընթացքում չի ուղղվել Բարքին:

Առաջին քացատրությունը, որ փաստը կարող է ստանալ, այն է, թե՛ Արցախում կանխապես գիտելին Բարքի հնարավոր պատասխանը, որ անկանած մերժողական պիտի լիներ: Սակայն իրականության համապատասխանող քացատրությունն այլ է: Հայերին քաջ հայտնի էր, որ հենց բոլշևիկյան Մոսկվան է 1921 թվականի կովյուրոյի ըստ Էռլեյյան չընդունված, սակայն գործադրված «որոշման»

<sup>1</sup> Ահա թե ինչպես է ներկայացրել Աղանքելյանի հայտարարությունը «Յումանիտե» թերթը. «Ես ուրախ կլինեի, եթե Լեռնային Ղարաբաղը վերադարձնեին Հայստանին: Որպես տնտեսագետ՝ ես գտնում եմ, որ նրանք շատ ավելի սերտ տնտեսական կապեր ունեն Հայաստանի, քան Աղրքեցանի հետ: Ես արդեն մտցրել եմ այդպիսի առաջարկություն և հուտով եմ, որ այդ գաղափարները մարմնավորում կատանան վերակառուցման ու ժողովրդավարության ոգով»:

<sup>2</sup> Կա նաև տեսակետ, որ այդ կարծիքը համաձանեցված չի եղել ԽՄԿԿ համապատասխան ատյանների հետ: Բայց անհավանական է թվում, թե զիսավոր քարտուղարի խորհրդականը կարող էր նման հայտարարություն անել առանց որևէ հիմքի:

<sup>3</sup> Թումաս դե Պալը իր «Ան այգի» գրքում մեջբերում է 1988 թ. մարտի 3-ին Գորբաչովի կողմից ԽՄԿԿ քաղցրությի անդամներին հայտնած այն փաստը, որ վերջին «երեք տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հարցով ստացվել է 500 նամակ», և որ Կենտրոնը անուշադրության է մատնել այդ լուրջ ազդանշանները:

հիմքի վրա Լեռնային Ղարաբաղը հանձնել Խորհրդային Ադրբեջանին: Մյուս կողմից նրանց համար պարզ էր, որ նախորդ տարիներին նման հարցերի լուծման իրավասությունը տրվել է Կենտրոնին: Առանց ԽՄԿԿ կենտրոնի նախական համաձայնության, առանց նրա հատուկ հանձնարարականների այդ կարգի (ազգային-պետական կարգավիճակի փոփոխության կամ տարածքների փոխանցման) որևէ հարց մինչ այդ չի լուծվել: Իսկ նախընթաց տասնամյակներում հենց Կենտրոնի նախաձեռնությամբ ու թույլտվությամբ նման կարգի ավելի քան նրկու տասնյակ հարց էր վերանայվել<sup>1</sup>:

Ծարժման մեկնարկի «քաղաքական միջավայրը» բնութագրող հաջորդ իրողությունն այն էր, որ իրադարձությունները ծավալվեցին մի երկրում, որտեղ քաղաքական իշխանության ղեկը գտնվում էր մեկ՝ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ծնորում: Սա պայմանավորում էր ոչ միայն այն հանգամանքը, որ նման հարցերի քննարկումները «վերևներում» ու «ներքևներում» տարվում էր նույն իրավաքաղաքական հասկացությունների ու սկզբունքների կաղապարներում: Առավել կարևոր էր այն, որ ազգային մեր հիմնախնդրի սկզբունքային հարցադրումների վրա չկար այլ կուսակցությունների կամ այլայլ գաղափարախոսական կողմորոշումների ստվերը:

Որքան էլ տարօրինակ հնչ՝ այդ հանգամանքը որոշակի դրական ներուժ է իր մեջ պարունակել այն իմաստով, որ խնդրով գրադարձ հայ մտավորականները զուտ ազգային, այլ ոչ թե կուսակցական կողմնորոշումներով ու շահերով պայմանավորված մոտենցումներ ունեին<sup>2</sup>: Պատահական չե, որ ժողովագամավորների մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումից մեկ ամիս ել չանցած՝ հետևեց մարզի կուսակցական կազմակերպության «ԼՂՄ-ը Հայկական ԽՄԿ-ին միացնելու մասին ինքնավար մարզի բնակչության պահանջը պաշտպանելու մասին» որոշումը, որը ԽՄԿԿ պատմության մեջ աննախադեպ ներկայաց էր: Այն գոյց տվեց, որ Արցախում խնդիրը դրույ էր կուսակցական շահարկումներից: Հնտագա տարիներին Արցախում և Հայաստանի Հանրապետությունում տարբեր սոցիալական ու գաղափարախոսական կողմնորոշումների կուսակցությունների հայտնվելը ավելի ակնառու դարձրեց նոր ստեղծված քաղաքական միջավայրի տարբերությունները Ծարժման մեկնարկի տարիների միջավայրից:

Այնուամենայնիվ, գոհունակությամբ պնտը է նշել, որ Արցախում բազմակուսակցական քաղաքական համակարգի ձևավորումը քաղաքական տարբեր կողմնորոշումների կուսակցական գործիչներին Ղարաբաղյան հիմնախնդրում թողեց սկզբունքորեն ազգային, կուսակցական շահերով չպայմանավորված, չկուսակցականացված մոտենցումների շրջանակներում: Հայաստանի Հանրապետությունում խնդիրի արձարծումների ներքադարձական միջավայրն այդ իմաստով որոշակիորեն տարբերվեց արցախյանից: Հայտնի է, որ հենց հիմնախնդրի կարգավորման տարրմբոնումները ՀՀ քաղաքական իշխանությունում (այդ թվում հենց Հայոց համազգային շարժման ներսում) դարձավ առաջին նախագահի հրաժարականի հիմնական պատճառը: Պետք է խստովանել, որ ոչ Խորհրդային Հայաստանում, ոչ էլ ԼՂՄ-ի մտավորական շրջանակներում հստակ պատկերացումներ չկային այն մասին, թե Ծարժումը քաղաքական ինչ արձագանք ու վերաբերմունք կգտնի «դրսում», և թե ինչ ազդեցություն կունենա հնարավոր այդ վերաբերմունքը հարցի լուծման վրա: Ծարժումը մեկնարկել է, եթե Խորհրդային Միությունը վիճակային միջուկային գնրտերությունն էր, որի համար, տարածված կարծիքի համաձայն, նման հարցերում «դրսի» կարծիքներն ու արձագանքները բառացիորեն ոչ մի նշանակություն չունեին: 1988-ին ոչ որի մտքով չէր անցնում, թե Խորհրդային Միության գոյատևմանը ընդամենը նրենք տարի է մնացել: Այս տեսակետից, չնայած այդ տարիներին այլախոհների ու այլախոհական շարժումների առկայությանը ԽՄԿՄ-ում, լուրջ չէր լինի խոսն Ղարաբաղյան շարժման արտաքին քաղաքական նախադրյալների մասին՝ նկատի ունենալով Ծարժման մեկնարկի տարեթիվը՝ 1988-ը:

<sup>1</sup> Այդ նախադեպերի ցուցակը տես՝ „Перечень указов Президиума Верховного Совета СССР (ЦИК) о передаче некоторых территориях из состава одной союзной республики в состав другой союзной республики” в книге „Статус Нагорного Карабаха в политico-правовых документах и материалах” Ереван, изд. Центра русско-армянских инициатив, 1995г.

<sup>2</sup> «Советский Карабах» оршերը, 18 մարտի 1988 թ.

Բնավ չի բացառվում, որ նոյնիսկ դրանից առաջ Արևմուտքի հատուկ ծառայությունները մշակում էին ԽՍՀՄ-ը տրոհելու ծրագրեր, ինչպես չի բացառվում որ տեսադաշտից դուրս գտնվող, «ստորջրյա» խողովակներով նրանք ազդել են Ղարաբաղյան հարցի վերաբորբոքմանը 1988-ին։ Սակայն այդ բոլորի մասին ազատազրական ըմբռատության ելած արցախցին տեղյակ լինել չեր կարող և չի նդել։ Այնպես որ Շարժման ձևավորման վրա իրական ներգործություն ունեցած արտաքին քաղաքական գործուներ 1988-ին չեն նդել։

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Աշոտ Դույսան – ԼՂՀ ազգային ժողովի նախագահ**

E-mail: ashot@artsakh.am

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ա.Ենգոյանը։